ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հոկտեմբերի 2010թ. **N -Ն**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԹԱՂԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի №116-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան քաղաքի վարչական շրջանների թաղային ներկայացուցիչների ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Երևանի քաղաքապետին եռամսյա ժամկետում հաստատել վարչական շրջանների թաղային ներկայացուցիչների ձևաթղթերի, դրոշմակնիքների և կնիքների միասնական ձևը:
3. Հանձնարարել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ը վարչական շրջաններում ձևավորել թաղային ներկայացուցիչներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության հեղինակներ՝

Երևան քաղաքի ավագանու

անդամներ՝ **Գ. Գասպարյան**

Պ. Փլավչյան

Հավելված
Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի
սեպտեմբերի .....-ի № ……..Ն որոշման

ԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԹԱՂԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է Երևան քաղաքի վարչական շրջանների առանձնատների թաղամասերում թաղային ներկայացուցիչների (այսուհետ՝ թաղային ներկայացուցիչ) ձևավորման կարգը և գործունեության ոլորտները:
2. Թաղային ներկայացուցիչ կարող է առաջադրվել տվյալ թաղամասում առանձնատան սեփականատեր հանդիսացող, այդ թաղամասում առնվազն մեկ տարի շարունակ հաշվառված և փաստացի բնակվող, 25 տարին լրացած յուրաքանչյուր ոք (այսուհետ՝ սեփականատեր), որի վրա չեն տարածվում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները:
3. Թաղային ներկայացուցիչները, որպես կանոն, գործում են հասարակական կարգով (անվճար): Առանձին դեպքերում, հաշվի առնելով նրանց գործունեության ծանրաբեռնվածությունը, սեփականատերերի ժողովի որոշմամբ ընտրված թաղային ներկայացուցչի համար սեփականատերերը, իսկ նշանակված թաղային ներկայացուցչի համար՝ վարչական շրջանի ղեկավարը, կարող են իրենց միջոցներից սահմանել վարձավճար:

II. Թաղային ներկայացուցիչների ձևավորումը

4. Թաղային ներկայացուցիչներն ընտրվում են սեփականատերերի ժողովում (այսուհետ՝ ժողով):
5. Թաղամասի տարածքի բաժանումը՝ ըստ բնակչության թվի, ժողովի օրը, ժամը, անցկացման տեղը սահմանում է վարչական շրջանի ղեկավարը և իր աշխատակազմի միջոցով ժողովից առնվազն 7 օր առաջ տեղեկացնում սեփականատերերին:
6. Վարչական շրջանի ղեկավարի սահմանած տարածքների սեփականատերերի մեծամասնության պահանջով, մի քանի տարածքներ կարող են միավորվել և ընտրել մեկ միասնական թաղային ներկայացուցիչ:
7. Ժողովը հրավիրվում է ոչ աշխատանքային օր:
8. Ժողովն իրավազոր է, եթե մասնակցում են սեփականատերերի մեծամասնությունը:

9. Ժողովում որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Յուրաքանչյուր մասնակից ունի մեկ ձայնի իրավունք:
10. Ժողովը բացում է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչը, որը քվեարկություններին չի մասնակցում:
11. Աշխատակազմի ներկայացուցիչը.
    1) ներկաներին բացատրում է ժողովի հրավիրման նպատակը,
    2) պարզաբանում ժողովն իրավազոր համարվելու համար մասնակիցների անհրաժեշտ թվաքանակը,
    3) հրապարակում ժողովի հրավիրված սեփականատերերի թվաքանակն ըստ ցուցակի և այն համեմատելով ներկա գտնվողների թվի հետ՝ հայտարարում ժողովի իրավազորության կամ այն չկայացած լինելու մասին (քվորումի առկայության կամ բացակայության մասին):
12. Քվորումի բացակայության դեպքում աշխատակազմի ներկայացուցիչը ժողովը հայտարարում է չկայացած:
13. Քվորումի առկայության դեպքում աշխատակազմի ներկայացուցիչը.
    1) ներկաներին ծանոթացնում է սույն կարգի դրույթներին,
    2) առաջարկում է տալ 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողովի անդամների թեկնածություններ և քվեարկության է դնում առաջադրվածներին,
    3) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումից հետո առաջարկում է տալ ժողովի նախագահի և քարտուղարի թեկնածություններ և անցկացնում քվեարկություն: Յուրաքանչյուրի թեկնածությունը քվեարկության է դրվում առանձին-առանձին,
    4) ժողովի նախագահի և քարտուղարի ընտրությունից հետո ժողովը վարում է ընտրված նախագահը:
14. Ժողովի նախագահը ներկաներին առաջարկում է տալ թաղային ներկայացուցչի թեկնածություններ:
15. Առաջադրված թեկնածուն (թեկնածուները) համառոտ ներկայացնում է իր կենսագրությունը և աշխատանքային գործունեությունը, որից հետո մինչև 3 րոպե ելույթներով կարող են հանդես գալ թեկնածուին (թեկնածուներին) առաջադրած անձինք:
16. Ելույթների ավարտից հետո ժողովի նախագահը հայտարարում է քվեարկություն, որի արդյունքում թաղային ներկայացուցիչ է ընտրվում ներկաների ձայների պարզ մեծամասնությունը ստացած թեկնածուն: Ձայները հավասար բաշխվելու դեպքում ժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
17. Եթե առաջադրվում են մեկից ավելի թեկնածուներ և նրանցից ոչ մեկը չի հավաքում ձայների անհրաժեշտ քանակությունը, ապա անցկացվում է քվեարկության 2-րդ փուլ՝ երկու առավել ձայներ ստացած թեկնածուների միջև:
18. Եթե որևէ թեկնածու չի ստանում ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությունը, ապա թաղային ներկայացուցչի ընտրությունը տեղափոխվում է հաջորդ ժողով:

19. Թաղային ներկայացուցիչ ընտրելու կամ թաղային ներկայացուցչի ընտրությունը հաջորդ ժողով տեղափոխելու մասին ժողովի որոշման արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահը, քարտուղարը և աշխատակազմի ներկայացուցիչը, որն էլ հաջորդ աշխատանքային օրը այն ներկայացնում է վարչական շրջանի ղեկավարին:
20. Հաջորդ ժողովի ընթացքում ևս քվորում չապահովվելու կամ թաղային ներկայացուցիչ չընտրվելու դեպքում՝ թաղային ներկայացուցչին նշանակում է վարչական շրջանի ղեկավարը:
21. Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցչի ժողովին չներկայանալու դեպքում ժողովն անցկացվում է նրա բացակայությամբ: Այս դեպքում ժողովի որոշման արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահն ու քարտուղարը:
22. Թաղային ներկայացուցիչն ընտրվում է (նշանակվում է) 2 տարի ժամկետով՝ նորից վերընտրվելու իրավունքով:
23. Եթե ընտրված կամ նշանակված թաղային ներկայացուցչի գործունեության ժամկետը լրանալուց հետո անցկացված ընտրությունների ժամանակ քվորում չի ապահովվում կամ նոր թաղային ներկայացուցիչ չի ընտրվում, ապա գործող թաղային ներկայացուցիչը կարող է շարունակել իր գործունեությունը ևս 2 տարի ժամկետով:

    Գործող թաղային ներկայացուցչի կողմից իր գործունեությունը շարունակելուց հրաժարվելու դեպքում թաղային ներկայացուցչին նշանակում է վարչական շրջանի ղեկավարը:
24. Թաղային ներկայացուցչի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա.
    1) մահացել է,
    2) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման,
    3) դատարանի որոշմամբ ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
    4) դուրս է եկել հաշվառումից կամ տեղափոխվել այլ բնակության վայր,
    5) հրաժարական է տվել:
25. Թաղային ներկայացուցչի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում վարչական շրջանի ղեկավարը նշանակում է նոր թաղային ներկայացուցչի ընտրություններ:
26. Սեփականատերերի ժողովը կարող է վաղաժամկետ դադարեցնել ինչպես իր կողմից ընտրված, այնպես էլ վարչական շրջանի ղեկավարի կողմից նշանակված թաղային ներկայացուցչի գործունեությունը, սակայն այդ լիազորությունները ստանձնելուց երեք ամսից ոչ շուտ:
27. Վարչական շրջանի ղեկավարը կարող է վաղաժամկետ դադարեցնել իր կողմից նշանակված թաղային ներկայացուցչի գործունեությունը, սակայն այդ լիազորությունները ստանձնելուց երեք ամսից ոչ շուտ և նշանակում նոր թաղային ներկայացուցչի ընտրություններ: Եթե ընտրությունները չեն կայանում

կամ թաղային ներկայացուցիչ չի ընտրվում, ապա վարչական շրջանի ղեկավարը նշանակում է նոր թաղային ներկայացուցիչ:

28. Թաղային ներկայացուցչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և նոր թաղային ներկայացուցիչ ընտրելու համար ժողով է հրավիրվում սեփականատերերի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ:
29. Նախաձեռնողները սահմանում են ժողովի անցկացման օրը, ժամը, տեղը և օրակարգը: Նախաձեռնությունը, ժողովից առնվազն 7 օր առաջ՝ նախաձեռնողների ստորագրությամբ, հանձնվում է վարչական շրջանի ղեկավարին:
30. Եթե ժողովի իրավազորության համար անհրաժեշտ քվորում չի ապահովվում կամ նոր թաղային ներկայացուցիչ չի ընտրվում, ապա գործող թաղային ներկայացուցիչը շարունակում է իր գործունեությունը:

III. Թաղային ներկայացուցիչների գործունեությունը

31. Թաղային ներկայացուցիչներն իրականացնում են հետևյալ գործառույթները.
    1) կատարում են իրենց թաղամասի առանձնատների հաշվառում՝ նշելով դրանց հասցեները, կառուցման տարեթվերը, առանձնատան և հողամասի չափերը, սեփականության վերաբերյալ փաստաթղթերը,
    2) կատարում են թաղամասի սեփականատերերի, օգտագործողների և փաստացի բնակվողների հաշվառում՝ նշելով նրանց անուն-ազգանունները, ծննդյան տարեթվերը, հաշվառման կամ բնակության հասցեները և ամսաթվերը, զբաղվածությունը,
    3) բնակիչներին տալիս են տեղեկանքներ նրանց բնակության կամ հաշվառման հասցեի, ընտանիքի կազմի, զբաղվածության, ունեցած սեփականության մասին,
    4) համապատասխան պետական մարմինների գրավոր պահանջով ներկայացնում են անհրաժեշտ տեղեկատվություն թաղամասի բնակիչների, այդ թվում՝ ընտրողների, զինակոչիկների, սոցիալապես անապահով ընտանիքների, նրանց բնակության կամ հաշվառման հասցեի, զբաղվածության, որպես սեփականատեր, օգտագործող կամ փաստացի բնակվող հանդիսանալու վերաբերյալ:
    Այդ մարմինների գրություններին պատասխանելու նպատակով թաղային ներկայացուցիչները կարող են գրավոր հարցումներ կատարել համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ,
    5) սեփականատերերի ժողովի որոշմամբ, նրանց անունից կնքում են պայմանագրեր աղբահանության, սանիտարական մաքրման ծառայություններ իրականացնող կազմակերպությունների հետ,
    6) մասնակցում են թաղամասում իրականացվելիք աշխատանքներին և ծրագրերին վերաբերող վարչական շրջանում կամ Երևանի ենթակայության կազմակերպություններում անցկացվող քննարկումներին:

32. Վարչական շրջանի ղեկավարը պարտավոր է թաղամասի խնդիրներին առնչվող հարցերով ողջամիտ ժամկետում ընդունել թաղային ներկայացուցչին:
33. Վարչական շրջանների ղեկավարները թաղային ներկայացուցիչներին ապահովում են ձևաթղթերով, դրոշմակնիքներով և կնիքներով, որոնց միասնական ձևը հաստատում է Երևանի քաղաքապետը:
34. Թաղային ներկայացուցիչները բնակիչներին տեղեկանքներ տրամադրելիս իրավունք ունեն նրանցից պահանջել անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթեր (ծննդյան, ամուսնության, սեփականության վկայականներ, անձնագրեր, աշխատանքային և զինվորական գրքույկներ):
35. Թաղային ներկայացուցիչների տված տեղեկանքներն իրավական ուժ ունեն միայն այն դեպքում, եթե դրանք գրված, ստորագրված և կնքված են սահմանված նմուշի ձևաթղթերի վրա:
36. Թաղային ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում ոչ հավաստի տեղեկատվություն տրամադրելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԹԱՂԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի վարչական շրջանների թաղային ներկայացուցիչների ձևավորման և գործունեության կարգը սահմանող սույն որոշման ընդունումը նպատակ է հետապնդում կանոնակարգել Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքներում գտնվող առանձնատների թաղամասերում թաղային ներկայացուցիչների ձևավորմանն ու գործունեությանն առնչվող հարցերը, այդ թվում՝ թաղային ներկայացուցիչների գործառույթները, նրանց ընտրության կամ նշանակման կարգը, որոնց, ընդհանուր առմամբ, անդրադարձել է Երևան քաղաքի ավագանու 2010թ. հունիսի 18-ի №116-Ն որոշումը (տես՝ որոշման հավելվածի 19-րդ և 20-րդ կետերը), սակայն այդ հարցերը ամբողջական ու հստակ չեն կարգավորվել, ուստի առաջարկվող որոշման ընդունումը նպատակ ունի լրացնելու այդ բացը:

Նախաձեռնության հեղինակներ՝
Երևան քաղաքի ավագանու
անդամներ՝ Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԹԱՂԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի վարչական շրջանների թաղային ներկայացուցիչների ձևավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախաձեռնության հեղինակներ՝
Երևան քաղաքի ավագանու
անդամներ՝ Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան